յանկեան ուրեք անխնամ և անդարման, զի ընդ տկարութեան մարմնոյ իւրոյ, ունէր նաեւ աղքատութիւն։ Ամիրայք խոստացան տալ յիւրաքանչիւր ամիսս 250 դահեկան, վճարել զամենայն պարտս նորին, և հանդիստ նստուցանել զինքն 'ի վանքն Իւսկիւտարու, և չհասուցանել վիշտս ինչ ինքեան և իւրոցն։ Յետ այնորիկ յանձն արարին նմա ընտրել զոք Պատրիարք 'ի տեղի իւր զո և կամեսցի, և նա ընտրեաց զՏաթեւացի Մելիքեան զԱբրահամ Եպիսկոպոս, որ էր յայնժամ 'ի Ս. Խաչ եկեղեցին Իւսկիւտարու, և առաքեալ զոմանս ածին զնա և բազմեցուցին առ Պատրիարքին, և նա լու 'ի լու բազմաց յանձն արար նմա օրհնութեամբ զիշխանութիւն Պատրիարքութեան, և նստուցեալ 'ի տեղի իւր խոնարհեցոյց զգլուխն, և ամենեքեան ուրախութեամբ մատեան 'ի համբոյր աջոյ նորին, և կոչեցեալ զԱտենադպիրն Ետուն գրել 'ի Դուռն զառաջնոյն հրաժարիլն և զերկրորդին ընտրութիւնն, և կնքեալ զայն առաքեցին 'ի ձեռն Փոխանորդ Պօղոս վարդապետին եւ երկուց աշխարհականաց։

Ապա յանձն արարին Ամիրայք զնոր Պատրիարքն Փոխանորդին Երուսաղէմի՝ պահել զնա առ իւր մինչեւ ըզգեցցի վերարկու պատուոյ։ Եւ յերեկոյին զնաց Աբրահամ ընդ Փոխանորդին առ Յովհաննէս, և զկնի ուրախութեան, ետ ընծայս առաջինն յաջորդին իւրոյ պատուական գորգ մի, զմրուխտ ազնիւ մատանի Զաքարեայ Պատրիարքի և զերկոսին գաւազանս իւր և խնդրեաց անդորր և հանգիստ պահել զինքն և զսպասաւորս իւր մինչ 'ի վախճան։ Եւ զկնի 5 աւուրց դնացին հրաւիրանօք 'ի Դուռն մեծաւ բազմութեամբ եկեղեցականք եւ աշխարհականք մեծահանդէս փառօք, և 'ի հասանիլն 'ի Դուռն Փաշային մուծին զնա յԱրքօսոնէ, ուր էր Տեղապահն. անդ զգեցուցին վերարկու պատուոյ Պատրիարքին, Աստուածատուր և Կարապետ Եպիսկոպոսաց, Երուսաղէմի Պօղոս և Սահակ, և Ս. Կարապետի Փոխանորդ Վարդապետաց, և Գարու Բեահեայսի Գէորգայ ըստ սովորութեան ժամանակին, և անտի դնացին առ Բեահեայ Պէյն, որ 'ի պատիւ նոցին ետ բերել խնկանոց և վարդի ջուր, զի աւուրք ծոմապահութեան էին, և ապա չոքան առ Բէյիզ Էֆէնտին